«Դուո» ծառայությունների փաթեթի պայմաններ «Կես գին» առաջարկի շրջանակներում

«Դուո»-ն ծառայությունների փաթեթ է, որի կազմում ներառված է երկու ծառայություն՝ «Լայնաշերտ ինտերնետ» և «Սմարթ հեռուստատեսություն»:

Աղյուսակ 1. Դուո ծառայությունների փաթեթի գնացուցակ.

Ծառայությունների փաթեթ Դուո	**Սիրելի**
Հիմնական ծառայություններ	
Ինտերնետի արագություն	20 Մբ/վ
Ներառված հեռուստաալիքների քանակ[1]	առնվազն 35
Հավելյալ ծառայություններ	
Մուլտիրում	հասանելի[2]
Մուլտիրում ծառայության Հավելյալ սմարթ սարք	հասանելի
SmartBox Wi-Fi	հասանելի
Եթերի տեսագրում (NPVR)	հասանելի
Նախկին հաղորդումներ (TV on Demand) ծառայության տևողություն	7 օր
Հավելյալ արագություն	հասանելի
Առանձին հեռուստաալիքներ	հասանելի
Թեմատիկ փաթեթներ	հասանելի
Ամսավճար[3]	**8500 դրամ**

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

«Դուո» ծառայությունների փաթեթը բաղկացած է «Դուո Ցանկալի» և «Դուո Սիրելի» սակագնային փաթեթներից:

1.1. Բաժանորդագրվելով «Դուո Սիրելի» սակագնային փաթեթին 1 տարով՝

1.1.1. Բաժանորդը պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 տարի (365 օր) շարունակ օգտվել «Դուո Սիրելի» սակագնային փաթեթից և Wi-Fi Սարքի օգտագործման իրավունքը ներառվում է «Դուո Սիրելի» սակագնային փաթեթում (Wi-Fi Սարքը) տրամադրվում է առանց վճարի գանձման,

1.1.2. Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 50 տոկոսով զեղչվում է «Դուո Սիրելի» սակագնային փաթեթի ամսավճարը 3 ամիս շարունակ, որից հետո գործում է «Դուո Սիրելի» սակագնային փաթեթի հիմնական ամսավճարը:

1.1.3. Բաժանորդը ստանում է իր սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության համեմատ կրկնակի ավելի բարձր արագություն պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օր) շարունակ (եթե Բաժանորդը օգտվում է «Հավելյալ արագություն» ծառայությունից, ապա

[1] «Դուո» ծառայությունների փաթեթի ալիքները հաստատուն չեն և կարող են փոփոխվել Օպերատորի կողմից ցանկացած պահի:

[2] Եթե որևէ հավելյալ ծառայություն հասանելի է, ապա հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում՝ վճարելով սահմանված ամսավճարը:

կրկնապատկվում է «Դուռ» ծառայությունների փաթեթի հիմնական պայմաններով սահմանված ինտերնետի արագությունը, իսկ արդեն իսկ ակտիվացված «Հավելյալ արագություն» ծառայության շրջանակներում տրամադրվող արագությունը գումարվում է «Դուռ» ծառայությունների փաթեթի շրջանակներում կրկնապատկված արագությանը):

1.1.4. Սակագնային փաթեթում ներառվում է «Հավելյալ 10» հեռուստաալիքների փաթեթը պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օր) շարունակ:

Wi-Fi Սարքի օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև «Դուռ Սիրելի» սակագնային փաթեթին 1 տարով բաժանորդագրության պայմաններով սահմանված պարտադիր ժամկետի ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված Պայմանագիրը մնում է ուժի մեջ, և Wi-Fi Սարքը անհրաժեշտ է Բաժանորդին Ծառայություններ մատուցելու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև Պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

«Դուռ Սիրելի» սակագնային փաթեթին բաժանորդագրության դեպքում պայմաններով սահմանված կարգով ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով ծառայությունների մատուցման կասեցման դեպքում սակագնային փաթեթին բաժանորդագրության ժամկետը երկարում է Ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում 1.1.2. ենթակետով տրամադրվող 50 տոկոս զեղչի՝ 3 ամիս, տրամադրման ժամկետը, 1.1.3. ենթակետով սահմանված ինտերնետի կրկնապատիկ արագության, ինչպես նաև 1.1.4. ենթակետով սահմանված «Հավելյալ 10» հեռուստաալիքների փաթեթի տրամադրման ժամկետները:

Եթե Բաժանորդը 1.1 կետում նշված կարգով ստացել է 50 տոկոս զեղչ 3 ամիս շարունակ, ինտերնետի կրկնակի արագացում և «Հավելյալ 10» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթը և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել 50 տոկոս զեղչից 3 ամիս շարունակ, ինտերնետի կրկնակի արագությունից և «Հավելյալ 10» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթից մինչև դրանց համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև 1. 1 կետով նախատեսված պայմանների տրամադրման գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում 1.1 կետով նախատեսված պայմանները դադարում են գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:

1.2. Գործող Բաժանորդը, պարտադիր տարեկան բաժանորդագրության պայմանով միանալով «Դուռ» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթին կամ վերակնքելով գործող տարեկան բաժանորդագրությամբ պայմանագիրը, «Դուռ» ծառայությունների փաթեթի շրջանակում ստանում է 1.1 կետով տրամադրվող առավելությունները բացառությամբ 1.1.2 ենթակետով տրամադրվող 50 տոկոս զեղչի՝ 3 ամիս շարունակ:

1.3. Եթե Բաժանորդը 1.2 կետում նշված կարգով ստացել է ինտերնետի կրկնակի արագացում և «Հավելյալ 10» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթը և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել ինտերնետի կրկնակի արագությունից և «Հավելյալ 10» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթից մինչև դրանց համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև 1. 2 կետով նախատեսված պայմանների տրամադրման գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում 1.2 կետով տրամադրված պայմանները դադարում են գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:

1.4. «Դուո Սիրելի» սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է մատուցված Ծառայություններից դրանց ակտիվացման օրվանից սկսած առնվազն 365 օրվա ընթացքում:

1.5. Եթե Բաժանորդը բաժանորդագրվել է «Դուո Սիրելի» սակագնային փաթեթին մեկ տարով և դադարեցնում է «Դուո Սիրելի» սակագնային փաթեթին բաժանորդագրությունը կամ Բաժանորդային պայմանագիրը լուծվում է Օպերատորի կողմից մինչև սահմանված պարտադիր ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը և տուգանք 15 000 ՀՀ դրամի չափով՝ Բաժանորդային պայմանագրի լուծման օրվանից հաշված 10 օրվա ընթացքում: